ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1 9 Սայաթ Նովա, Երեւան
Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

21-րդ դարի գործարարության մարտահրավերները

Ավելի քան տասնհինգ տարի է, ինչ Հայաստանն անցում է կատարել տնտեսվարման նոր համակարգի. արձանագրված բազմաթիվ փոփոխություններից ամենաէականների և արմատականների շարքում, թերևս, մասնավոր հատվածի ձևավորումն էր: Գործընթացի մեկնարկն արձանագրեց նշանակալի պետական մասնակցություն. պետությունն ուժերի ներածին չափով աջակցում էր մասնավոր հատվածի կայացմանը: Տեղի էր ունենում դերերի ու պարտականությունների վերաբաշխում: Եթե մինչ այդ երկրի տնտեսական զարգացումն ապահովում էր պետությունը, ապա այժմ այդ պատասխանատվության առյուծի բաժինն ընկնում է մասնավոր հատվածի ուսերին: Եթե մասնավոր հատվածի ձևավորման գործընթացի սկզբում առաջնային խնդիրը գոյատևման՝ իրեն որպես ուժեղ և մրցունակ տեսակ դրսևորելու խնդիրն էր, ապա այսօր կարելի է փաստել, որ այս խնդիրն այլևս լուծված է. մասնավոր հատվածն արդեն հանդես է գալիս որպես ուրույն տեսակ: Միևնույն ժամանակ, սակայն, նշված պատասխանատվությունը լիարժեք իրականացնելու համար անհրաժեշտ են կայացած և ոչ թե ձևավորվող սուբյեկտներ, մինչդեռ Հայաստանում մասնավոր հատվածի կայացումը շարունակվում է մինչ օրս:

Իսկ որտե՞ղ է հանրային խնդիրներում պատասխանատվություն ստանձնելու հարցում գործարար հատված-պետություն ջրբաժանն այսօր: Հայաստանում արդեն իսկ հստակորեն տարանջատվում են պետության և մասնավոր հատվածի գործառույթները: Սակայն, հայտնի է, որ յուրաքանչյուր ձևավորման գործընթացի բնականոն շարունակությունը կատարելագործման գործընթացն է, և այսօր Հայաստանի մասնավոր հատվածը կարիք ունի հղկելու և առավել արդյունավետորեն սահմանելու իր գործառույթները: Բիզնեսն իբրև շահույթ հետապնդող միավոր ինքնին ինքնահարատ լինել չի կարող: Մերօրյա իրականության պայմաններում երկարաժամկետ և կայուն զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է ավելի ընդգրկուն տեսլական, առավել համապարփակ գործելաոճ: Իսկ թե ինչպես կարելի է ծավալել նման գործունեություն, հուշում է համաշխարհային փորձը, մասնավորապես «ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիր» ծրագիրը, որը մասնավոր հատվածի գործունեության շրջանակներն ընդլայնում է մինչև մարդու իրավունքների, աշխատանքի չափանիշների, բնապահպանության և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներ: 1999թ. Կոֆի Անանի կողմից առաջարկված այս գաղափարի հիմքում ընկած է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սկզբունքը, որը Կայուն զարգացման համաշխարհային բիզնես խորհուրդը սահմանում է որպես. «բիզնեսի շարունակական պարտավորություն առ այն, որ պետք է գործել բարոյական նորմերին համապատասխան և նպաստել տնտեսական զարգացմանը՝ միաժամանակ բարելավելով աշխատուժի և նրանց ընտանիքների, ինչպես նաև համայնքների և ընդհանրապես հասարակության կյանքի որակը»[1]:

Փաստորեն, հայ գործարարն այսօր թևակոխելու է զարգացման մի փուլ, երբ կրելու է սոցիալական պատասխանատվություն իր աշխատողի, նրա ընտանիքի, համայնքի ու այդպիսով՝ լայն հասարակության համար. գործառույթներ, որ առաջին հայացքից կարծես պետությանն են լոկ: Եթե երեկ կարճաժամկետ շահույթի ապահովումն օժանդակում էր նրա գոյությանը, ապա այսօր իր ապագա շահույթը երաշխավորելու համար նա ստիպված է լինելու մտածել իր աշխատուժի պահպանման և զարգացման խնդիրների մասին: Սա է 21-րդ դարի մարտահրավերը գործարարության համար:

[1] CSR: Meeting Changing Expectations, 1999

ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիրը

Առաջարկելով Գլոբալ պայմանագրի գաղափարը՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը գործարար աշխարհի առաջնորդներին հրավիրեց միանալ միջազգային այս նախաձեռնությանը, որի արդյունքում կապն ընկերությունների և աշխատուժի ու քաղաքացիական հասարակության միջև ավելի սերտ կլինի և հնարավորություն կստեղծվի հետևել համընդհանուր սոցիալական և բնապահպանական սկզբունքներին: ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիրը խրախուսում է ընկերություններին ազդեցության իրենց շրջանակներում գնահատել, աջակցել և գործնականում կիրառել մի շարք հիմնարար արժեքներ, մասնավորապես մարդու իրավունքների, աշխատանքի չափորոշիչների, բնապահպանության և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում:

Գլոբալ պայմանագիրը կարգավորող գործիք չէ. այն «ոստիկանի» դեր չի ստանձնում, ինչպես նաև չի պարտադրում կամ չափում ընկերությունների վարքն ու գործունեությունը: Գլոբալ պայմանագիրն իրականում հենվում է հանրային պատասխանատվության, թափանցիկության և ընկերությունների, աշխատուժի և քաղաքացիական հասարակության սեփական շահագրգռվածության վրա, որպեսզի վերջիններս նախաձեռնեն և մասնակցեն այնպիսի գործողությունների, որոնց հիմքում Գլոբալ պայմանագրի հիմնաքարերը հանդիսացող սկզբունքներն են:

Սկսեցի՞նք

Այդ դեպքում ձևավորման այս գործընթացում ո՞վ է լինելու այս սկզբունքի պահանջատերը Հայաստանում՝ պետությունը, թե՞ մասնավոր հատվածը: Որքան էլ հայ իրականության ու գիտակցության համար դժվարընկալելի լինի համագործակցային պատասխանատվության պրակտիկան, պետք է ընդունել, որ այս դեպքում դա անհրաժեշտ պայման է, եթե ցանկանում ենք առաջընթաց գրանցել: Այստեղ չի կարող լինել միայն վերևից ներքև կամ միայն ներքևից վերև շարժում: Որպեսզի գործարարը սոցիալական պատասխանատվություն կրի մի երկրում, որտեղ անցում է կատարվել ավտորիտարից ժողովրդավար համակարգի, նա պետք է հնարավորություն ստանա հստակորեն հասկանալու խաղի նոր՝ ժողովրդավար կանոնները, այսինքն նրա պարտականությունները պետք է կարգավորվեն օրենսդրորեն: Իսկ որպեսզի պետությունը կարողանա օրենսդրորեն արդար խաղի կանոններ առաջադրել, խաղի միջավայրի նրա ընկալումը պետք է լինի իրատեսական և հեռանկարային: Ուրեմն, կորպորատիվ սոցիալական պատասխանատվությամբ նոր աշխատանքային հարաբերությունները պայմանավորելու համար անհրաժեշտ է սկսել «կորպորատիվ», իմա՝ միավորված գործելաոճից:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սկզբունքի դասական սահմանումը պնդում է. «մի շարք հիմնարար արժեքների, մասնավորապես՝ մարդու իրավունքների, աշխատանքի չափորոշիչների, բնապահպանության և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում աջակցություն և գործնական կիրառում գործարար հատվածի կողմից»: Պարզ, հստակ ձևակերպում, որի կիրառումն իրականում մեծ ջանքեր է պահանջում մի երկրում, որտեղ դեռևս կայանում են ինստիտուտներն ու օրենսդրական դաշտը, մասնավոր հատվածն ու աշխատանքային հարաբերությունները:

Նման պայմաններում, կարծես, սայլը տեղից շարժելու համար պարզապես հարկ է անսալ հայրենական գործարարների հաշվենկատությանն ու հեռուն տեսնելու կարողությանը:

Համառոտագիրը մշակվել է ՄՀՄԿ 2007թ-ի փետրվարի 27-ին կայացած՝ «Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն. որտեղ է գտնվում Հայաստանը» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին ներկա էին գործարարներ, անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Կլոր սեղանը կազմակերպվել էր ՄԱԿ-ի զարգացման ծրագրի օժանդակությամբ: